ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:
4. Ընթացիկ հարցեր

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը ներկայացրեք օրակարգը:

Քննարկման դրվեց օրակարգի առաջին հարցը:

-Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիայի ամբիոնում այս դրությամբ լուծարքներ չունենք: Քննական շրջանի ավարտից հետո գրեթե բոլոր կուրսերում եղել են 1-2 անբավարար ստացողներ, բացառությամբ 4-րդ կուրսի, որտեղ անբավարար են ստացել 4 ուսանող: Առաջին լուծարքին ուսանողները ստացել են իրենց անցողիկ միավորները:

-Տ.Վ.Ղոչիկյան – Ինչով է պայմանավորված այդ երևույթը, ինչպես կբացատրեք:

- Ն.Ա.Դուրգարյան հիմնականում ուսանողը ներկայացել է և նշել է , որ պատրաստ չէ, քանի որ քննությունների միջև ընդմիջումները կարճ են նշանակել: Առարկան, որի ծավալը մեծ է՝ թողել են լուծարքային շրջանին:

Գ.Կ.Գրիգորյան- Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում նմանատիպ երևույթ է արձանագրվել, բացառությամբ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների, որոնցից լուծարքային շրջան են անցել 22 ուսանող: Առաջին լուծարքի ժամանակ անցողիկ շեմը հաղթահարել են 10 ուսանող:

Տ.Վ.Ղոչիկյան Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչը հարգելի պատճառով բացակայում է: Այս ամբիոնի տվյալները դեկանատում է, պետք է ներկայացներ գրասենյակի պատասխանատուն:

Տ.Վ.Ղոչիկյան – Անցնենք օրակարգի երկրորդ հարցին, այն վերաբերվում է մագիստրոսական ծրագրերին:

Քիմիա մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրի ղեկավար Ն.Ա.Դուրգարյան:

-Քիմիա մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիրը վերանայվել ամբողջությամբ փոխվել է: Օրգանական քիմիայի ամբիոնում՝ կրկնություններ, վերադրումները բացառված են: Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում գործընթացը մոտենում է ավարտին և շուտով կամփոփվի:

-Նյութագիտություն մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիրը համապատասխանորմ է նոր ռազմավարությանը և այստեղ կրկնություններ չկան:

-Սննդի անվտանգություն մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիրը քննարկվում է:

-Տ.Վ.Ղոչիկյան- այժմ անդրադառնանք օրակարգի երրորդ հարցին:

Այս հարցի վերաբերյալ ես կատարեմ իմ նկատառումները, որից հետո ամբիոնի վարիչները կներկայացնենք իրենց պարզաբանումները: Նախ ուզում եմ նշել, որ երեք մագիստրոսական ծրագրերի շրջանակներում իրականացված էին լուրջ գիտական հետազոտություններ: Աշխատանքները շատ հետաքրքիր էին. Հանձանաժողովների նախագահները բարձր գնահատեցին և՛ կատարված աշխատանքները, և՛ ուսանողների պատրաստվածությունը: Այս ամենի հետ զուգահեռ ուզում եմ նշել մեկ թերություն՝ աշխատանքներում ընդգրկված էին նաև չհաջողված փորձերը: Բացասական տվյալը՝ նույնպես տվյալ է, բայց դա չպետք է ներառել մագիստրոսական թեզերում:

- Ն.Ա.Դուրգարյան,- Թույլ տվեք չհամաձայնվել: Փորձի բացասական արդյունքը՝ նույնպես արդյունք է: Վերջերս եվրոպական հայտնի ամսագրից նամակ եմ ստացել,

որտեղ խնդրում են ներկայացնել այն փորձերը, որոնք չեն ստացվել և ներկայացնել բոլոր պայմանները: Այդ հավաքական աշխատանքի նպատակն այն է, որ այլ գիտական խմբեր լրացուցիչ ժամանակ չծախսեն բասացական տվյալներով փորձերի վրա:

- Տ.Վ.Ղոչիկյան,- ամեն դեպքում մագիստրոսական ավարտական աշխատանքներում պետք է ընդգրկել դրական արդյունքներ:

Նիստի նախագահ

Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար

Դոցենտ Մ.Ա.Սամվելյան